

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի <<Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,
2. Բարձրագույն կրթությունը,
3. Նույնանվան հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր) :

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. Պիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,
3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը,
4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացնել մրցույթից առնվազն երեք օր առաջ),
5. հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),
6. աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2018թ. նոյեմբերի 14-ից մինչև 2018 թ. դեկտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր ժամը 10<sup>00</sup>-ից մինչև 14<sup>00</sup>-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից, Պտղունքի միջնակարգ դպրոցում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2018 թվականի դեկտեմբերի 24-ին, ժամը 15<sup>00</sup>-ին՝ Պտղունքի միջնակարգ դպրոցում:

Հասցե՝ գ. Պտղունք, Հ. Շիրազի 46:

Տեղեկությունների համար զանգահարել 093-41-07-08 հեռախոսահամարով:

ՀՀ Արմավիրի մարզի

<<Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց >>

ՊՈԱԿ կառավարման խորհուրդ

**Քաղվածք**

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ <<Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց>> ՊԵՏԱԿԱՆ  
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2018Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30 -ԻՆ  
ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ N 7 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ**

**ԼՍԵՑԻՆ.**

Համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի ՀՀ Արմավիրի մարզի <<Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելու հարցը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. ՀՀ Արմավիրի մարզի << Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի համար անցկացնել մրցույթ:  
Մրցույթը նշանակել 2018թ.դեկտեմբերի 24-ին ժամը 15<sup>00</sup>-ին
2. Խորհրդի որոշումը ներկայացնել ՀՀ կրթության և գիտության նախարարին և ՀՀ Արմավիրի մարզպետին:

**Խորհրդի նախագահ՝**

**Վ. Հովհաննիսյան**